ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	**3**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ	**4**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ	**6**
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	**8**
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**25**
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ	**32**
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	**39**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	**45**
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	**50**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը միտված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՀԳՊԱ) հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովմանը և ներկայացնում է 2024 թվականին ՀԳՊԱ-ի կողմից իրականացված գործունեության և ֆինանսական մուտքերի ու ծախսերի համառոտ հաշվետվությունը:

Հաշվետվությունն ամփոփում է տեղեկատվություն ՀԳՊԱ-ի գործունեության հետևյալ առանցքային ուղղություններով.

- Կրթական ծրագրերը և ակադեմիական միջավայրը
- Հետազոտությունը և ստեղծագործական գործունեությունը
- Համագործակցությունը և հասարակության հետ երկխոսությունը
- Աջակցությունը ուսանողներին, ներառական միջավայրը և կապերը շրջանավարտների հետ
- Առաջնորդությունը և արդյունավետ կառավարումը
- Ֆինանսական հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1	Դանիել Դանիելյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
2	Սեդրակ Սիմոնյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության խորհրդական ՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
3	Հովհաննես Գևորգյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության պետ
4	Լուսինե Գրիգորյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ
5	Էդուարդ Ներսիսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետի տեղակալ
6	Սուրեն Սաֆարյան	Հայաստանի նկարիչների միության նախագահ
7	Մարինա Հակոբյան	Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն
8	Էմին Մկրտչյան	«Զանգակ» հրատարակչության գործադիր տնօրեն
9	Գարեգին Էվանգուլյան	«Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր նկարիչ
10	Սուսաննա Կիրակոսյան	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի վերականգման բաժնի աշխատակից, մանրանկարիչ
11	Գարեգին Դավթյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Քանդակագործության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

12	Արամ Իսաբեկյան	ՀՀ ժողովրդական նկարիչ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
13	Արթուր Հովհաննիսյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի ֆակուլտետի Գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու
14	Աշոտ Գրիգորյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի պրոֆեսոր, ճարտարապետության դոկտոր
15	Մեխակ Էլբակյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի ֆակուլտետի Գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի դոցենտ
16	Ալիսա Դանիելյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի ֆակուլտետի ուսանող
17	Անաստասիա Ալաջաջյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանող
18	Դավիթ Սահակյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Կերպարվեստի ֆակուլտետի ուսանող
19	Աննա Գևորգյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Վարդան Լևոնի Ազատյան	Ռեկտոր, գ.թ.
Եկատերինա Անդրեյի Կաշինա	Ուսումնագիտական գծով պրոռեկտորի ժ/պ
Հայկ Սերգեյի Պարոնյան	Ֆինանսատնտեսական գծով պրոռեկտոր
Ավետիք Արամայիսի Ավետիսյան	Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ժ/պ, պրոֆեսոր
Վահե Կարենի Գասպարյան	Կերպարվեստի ֆակուլտետի դեկանի ժ/պ, դոցենտ, գ.թ.
Վահագն Համբարձումի Ղուկասյան	Գյումրու մասնաճյուղի տնօրեն, դոցենտ
Անահիտ Զարզանդի Օհանյան	Գիտական քարտուղար
Զարուհի Ավետիսի Հակոբյան	Հետազոտական կենտրոնի ղեկավար, դոցենտ, գ.թ.
Հենրիկ Վահանի Հովհաննիսյան	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գ.դ., պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Լևոն Հմայակի Աբրահամյան	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայ ազգագրագետ, պատմաբան, գ.թ., Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ
Փարավոն Միքայելի Միրզոյան	Գեղանկարի և գծանկարի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական նկարիչ
Աբրահամ Հրանտիկի Սահակյան	Գրաֆիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Արմինե Արարատի Գաբրիելյան	Արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչի ժ/պ, գ.թ.

Հայկ Ստեփանի Փայասլյան	Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, գ.թ.
Սամվել Կարապետի Մարտիրոսյան	Գծանկարի և գունանկարի ամբիոնի պրոֆեսոր
Մարիա Իոսիֆի Բաբյան	Դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի վարիչի ժ/պ, դոցենտ
Վահագն Գևորգի Հայրապետյան	«Դեկորատիվ կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող
Մերի Վահանի Ավագյան	«Համակարգչային գրաֆիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի
Նանե Արմանի Դավթյան	«Արվեստաբանություն» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի
Արծվիկ Հայրապետի Ավդալյան	«Գեղանկարչություն» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի
Տաթև Արմանի Ասլանյան	«Գրաֆիկա» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի
Անի Արտեմի Պետրոսյան	Գյումրու մասնաճյուղի «Դեկորատիվ կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Այս ուղղությամբ ՀԳՊԱ-ի գործունեությունը միտված է իրականացնելու ստեղծագործությունը, նորարարությունը և ձեռներեցությունը խրախուսող կրթական ծրագրեր, որոնք համահունչ են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին, բխում են աշխատաշուկայի պահանջներից և նպաստում են բուհի մրցունակությանը և միջազգայնացմանը: 2024 թվականի ընթացքում այս ուղղությամբ ՀԳՊԱ-ի կողմից կատարված գործունեության արդյունքներն են.

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2024-2025 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվել է՝ ըստ ՀԳՊԱ-ի մասնագետների մշակած և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված առաջադրանքների և գնահատման չափանիշների, որոնք հասանելի են ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Մագիստրոսի կրթական ծրագրով 2024-2025 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է՝ ըստ «ՀԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: Դիմորդների բաշխումն՝ ըստ ՀԳՊԱ-ի, Գյումրու մասնաճյուղի և Դիլիջանի ստորաբաժանման հետևյալն է՝

Բակալավրի կրթական ծրագիր

Երևան	205
Գյումրի	41
Դիլիջան	4
Ընդամենը	**250**

Մագիստրոսի կրթական ծրագիր

Երևան	58
Գյումրի	7
Ընդամենը	**65**

Մրցույթի արդյունքում 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության տվյալները հետևյալն են՝

Բակալավրի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	41	153	194
Գյումրի	8	28	36
Դիլիջան	**1**	**3**	**4**
Ընդամենը	**50**	**184**	**234**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	16	20	36
Գյումրի	3	4	7
Ընդամենը	**19**	**24**	**43**

2024 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

Բակալավրի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	178	537	715
Գյումրի	42	88	130
Դիլիջան	6	4	10
Ընդամենը	**226**	**629**	**855**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	32	32	64
Գյումրի	5	11	16
Ընդամենը	**37**	**43**	**80**



Վերջին հինգ տարիների վիճակագրական պատկերը հետևյալն է.

Դիմորդների և ընդունվածների բաշխումն՝ ըստ մասնաճյուղերի և ուսումնական տարիների

Բակալավրի կրթական ծրագիր										
	2020-2021		2021-2022		2022-2023		2023-2024		2024-2025	
	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված
Երևան	268	205	225	189	213	200	192	187	205	194
Գյումրի	31	28	34	30	47	46	46	45	41	36
Դիլիջան	9	7	3	3	4	3	1	1	4	4
Ընդամենը	**308**	**240**	**262**	**222**	**264**	**249**	**239**	**233**	**250**	**234**



Մագիստրոսի կրթական ծրագիր										
	2020-2021		2021-2022		2022-2023		2023-2024		2024-2025	
	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված
Երևան	82	51	46	33	89	43	42	42	58	36
Գյումրի	11	11	15	15	2	2	12	11	7	7
Ընդամենը	**93**	**62**	**61**	**48**	**91**	**45**	**54**	**53**	**65**	**43**



Ուսանողների ընդհանուր թիվը ՀԳՊԱ-ում, Գյումրու մասնաճյուղում և Դիլիջանի ստորաբաժանումում՝ ըստ կարգավիճակի (պետ. պատվեր / վճարովի)

Բակալավրի կրթական ծրագիր															
	2020-2021			2020-2021			2022-2023			2023-2024			2024-2025		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը
Երևան	190	429	619	182	466	648	188	534	722	190	529	719	178	537	715
Գյումրի	36	58	94	36	59	95	40	83	123	40	76	116	42	88	130
Դիլիջան	12	9	21	12	8	20	10	9	19	8	5	13	6	4	10
Ընդամենը	**238**	**496**	**734**	**230**	**533**	**763**	**238**	**626**	**864**	**238**	**610**	**848**	**226**	**629**	**855**



Մագիստրոսի կրթական ծրագիր															
	2020-2021			2021-2022			2022-2023			2023-2024			2024-2025		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը
Երևան	33	53	86	35	39	74	37	38	75	33	33	66	32	32	64
Գյումրի	3	11	14	6	21	27	6	11	17	3	9	12	5	11	16
Ընդամենը	**36**	**64**	**100**	**41**	**60**	**101**	**43**	**49**	**92**	**36**	**42**	**78**	**37**	**43**	**80**



ՀԳՊԱ-ի ընդհանուր ուսանողների թվի համեմատությունը՝ վերջին հինգ ուսումնական տարիների դեկտեմբեր ամսվա դրությամբ

	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024	2024-2025
Երևան	705	722	797	785	779
Գյումրի	108	122	139	131	146
Դիլիջան	21	20	19	12	10
Ընդամենը	**834**	**864**	**955**	**928**	**935**

2024 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ից ազատվել և հեռացվել է 92 ուսանող: 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՀԳՊԱ-ից ազատվել և հեռացվել է 45 ուսանող, որոնցից 19-ը՝ իրենց դիմումի համաձայն, 8-ը՝ տարկետում վերցնելու կապակցությամբ, 18-ը՝ հեռացվել են: 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ազատվել և հեռացվել է 47 ուսանող, որոնցից 2-ը ազատվել է Գյումրու մասնաճյուղ տեղափոխվելու կապակցությամբ, 14-ը՝ իրենց դիմումի համաձայն, 18-ը ձևակերպել են տարկետում, իսկ 13-ը՝ հեռացվել են: Ընդհանուր առմամբ 2024 թվականի ընթացքում իրենց դիմումի համաձայն ազատվել են 35 ուսանողներ, 31-ը հեռացվել են, իսկ 26-ը գտնվում են տարկետման մեջ:

Ազատվածների և հեռացվածների բաշխումն՝ ըստ մասնաճյուղերի և ուսումնական կիսամյակների.

Բակալավրի կրթական ծրագիր

	2023-2024 2-րդ կիս.	2024-2025 1-ին կիս.	Ընդամենը 2024-ին
Երևան	34	35	69
Գյումրի	7	9	16
Դիլիջան	0	0	0
Ընդամենը	41	44	85

Մագիստրոսի կրթական ծրագիր

	2023-2024 2-րդ կիս.	2024-2025 1-ին կիս.	Ընդամենը 2024-ին
Երևան	2	3	5
Գյումրի	2	0	2
Ընդամենը	**4**	**3**	**7**

Բ. Որակավորումներ

2023-2024 ուսումնական տարում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան, Գյումրու մասնաճյուղը և Դիլիջանի ստորաբաժանումը ավարտել է 241 ուսանող, որոնցից 208-ը՝ բակալավրի կրթական աստիճանով և 33-ը՝ մագիստրոսի կրթական աստիճանով:

Գ. Դասախոսական կազմ

2024-2025 ուսումնական տարվա ուսումնական գործընթացը ՀԳՊԱ-ում ապահովում է 205 դասախոս (36-ը Գյումրու մասնաճյուղում), որոնցից 102-ը՝

հիմնական (որից 22-ը՝ Գյումրու մասնաճյուղում), 103-ը՝ համատեղությամբ և ժամավճարային (որից 14-ը՝ Գյումրու մասնաճյուղում): ՀԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ ամբիոնների, ներկայացված է ՀԳՊԱ-ի պաշտոնական կայք-էջի «Դասախոսներ» բաժնում:

Դ. Ուսումնական գործընթացի բարելավում

2024 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ն շարունակել է բակալավրի կրթական ծրագրերում մոդուլային ուսուցման իրականացումը: Այս շրջանակում Կրթական ծրագրերի մշակումների բաժնի և ամբիոնների համագործակցությամբ ամփոփվել են հետևյալ գործողությունները՝

- ամբողջականացվել են 2021թ. լրամշակված կրթական ծրագրերի նկարագրության փաթեթները՝ ամփոփված ուսումնական պլաններով և մոդուլների նկարագրերով,
- կազմվել են կրթական ծրագրերի ինքնագնահատման զեկույցներ, որտեղ ամփոփվել են նախորդ 4 տարիների ընթացքում բակալավրի կրթական ծրագրերի իրականացումն ու արդյունավետությունը,
- մեկնարկել են կրթական ծրագրերի ներքին աուդիտի իրականացման աշխատանքները,
- ամփոփվել է «Իրական նախագիծ» մոդուլի հայեցակարգը և իրականացման ուղեցույցը, որի հիման վրա մեկնարկեց «Իրական նախագիծ» մոդուլը «Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն» և «Ինտերիերի դիզայն» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերում,
- 2023-2024թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ԼԻՎԵՐ կազմակերպության հետ համատեղ Կերպարվեստի ֆակուլտետում իրականացվեց «Համագործակցային նախագիծ» մոդուլը, որի արդյունքում անցկացվեց ցուցահանդես-վաճառք,
- 2024-2025թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակում մեկնարկեց «Համագործակցային նախագիծ» մոդուլի երկրորդ շրջափուլը

«Համակարգչային գրաֆիկա» և «Դեկորատիվ կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերում,

- կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցության պայմանավորվածություններ ձեռք բերվեցին նոր գործընկերների ՝ «Բրենդոն», «Գրանդ մաստեր», «Մետր Մարկ» կազմակերպությունների հետ,
- ընդլայնվել է ընտրովի դասընթացների շարքը՝ միտված զարգացնելու փոխանցելի, ընդհանրական և փափուկ հմտությունները, իսկ դասընթացները վարելու համար հրավիրվել են ոլորտի մասնագետներ («Արվեստի կառավարում», «Մտավոր սեփականությունը ստեղծարար ոլորտում», «Ստեղծագործական հետազոտություն», «Ձեռնարկատիրության արվեստը՝ գաղափարից բիզնես» և այլն),
- մեկնարկել են բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման նոր ուղեցույցի և ավարտական աշխատանքների գնահատման նոր հայեցակարգի մշակման աշխատանքները՝
- Ուսանողների ուսումնառության փորձը հարստացնելու նպատակով նախաձեռնվել են մի շարք նոր գործընթացներ.
- Ռուսական արվեստի թանգարանի հետ համագործակցության շրջանակներում «Գեղանկարչություն» բակալավրի կրթական ծրագրի ուսանողները ամառային պրակտիկայի ընթացքում առաջին անգամ իրականացրեցին թանգարանի աշխատանքների կրկնօրինակում,
- Մասնաճյուղերի հետ կապը և համագործակցությունը ամրապնդելու նպատակով իրականացվել է Երևանի և Գյումրու մասնաճյուղի ուսանողների փոխանակում ամառային պրակտիկայի շրջանակներում, որի ընթացքում ուսանողները հնարավորություն ստացան ծանոթանալու իրենց ոլորտի նոր տեխնիկաներին և տեխնոլոգիաներին,
- ՀԳՊԱ-ի և Հայաստանի ազգային պատկերասրահի համատեղ աշխատանքի և համագործակցության զարգացման շնորհիվ բուհի բոլոր ուսանողները 2025 թվականից պատկերասրահ այցելելու են անվճար,

- Առաջին անգամ կազմակերպվել և իրականացվել է հրավիրված մերկ բնորդով ճեպանկարի երկօրյա բաց դաս, որը այցելել են 100-ից ավել ուսանողներ: Ուսանողների աշխատանքը համակարգել են Կերպարվեստի ֆակուլտետի դեկան՝ Վահե Գասպարյանը և Գեղանկարի և գծանկարի ամբիոնի դոցենտ՝ Արթուր Հովհաննիսյանը: Հաշվի առնելով մասնակիցների դրական արձագանքները՝ որոշվեց միջոցառումը դարձնել ավանդույթ:

Ուսումնական գործընթացի բարելավման նպատակով մշակվել/վերանայվել են մի շարք ներքին փաստաթղթեր.

- Ուսանողական նպաստի տրամադրման կարգ
- ՀԳՊԱ ուսանողական խորհրդի կանոնադրություն
- Մտավոր սեփականության քաղաքականություն
- ՀԳՊԱ ուսանողների շարժունության կարգ
- Աշխատողների գործուղումների և ուղեգրումների մասին կանոնակարգ
- ՀԳՊԱ քննական տեղեկագրերի պահպանման և խոտանման կարգ

Ե. Ուսումնական միջավայրի բարելավում

Ուսումնական միջավայրը բարելավելու նպատակով 2024 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ գործողությունները.

- Խեցեգործության լաբորատորիայի համար ձեռք է բերվել ձևավորման հաստոց:
- Վիտրաժի լաբորատորիայի համար ձեռք է բերվել Ֆյուզինգի վառարան:
- Էրասմուս +«DeSIRe» դրամաշնորհային ծրագիրի շրջանակում ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա, որը հնարավորություն կտա ունենալ որակյալ ձայնագրման և մոնտաժի լաբորատորիա:

- Կառուցվել է 5 սանիտարական հանգույց՝ Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի պահանջներին համապատասխան, այդ թվում մեկը՝ տեղաշարժման սահմանափակ կարողություններով ուսանողների համար: Կառուցվել է լոգասենյակ, ինչը լուծելու է բնորդների և աղտոտող նյութերի հետ աշխատող ուսանողների և աշխատակիցների հիգիենայի խնդիրները:
- Բոլոր սանիտարական հանգույցները ապահովվել են տաք ջրով:
- Ամբողջությամբ վերանորոգվել է Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի մասնաշենքի տանիքը, լուծվել է կոյուղու և ջրահեռացման խնդիրները, ինչը տարիներ շարունակ ստեղծել է հակասանիտարական պայմաններ և խոչընդոտել է ուսանողների ուսումնական գործընթացին:
- Բարեկարգվել են Կերպարվեստի ֆակուլտետի մի շարք տարածքներ՝ լսարան, միջանցք և այլն:
- Նախագծվել է տվյալների փախանցման ցանցը:

ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղում շենքային պայմանների բարելավման աշխատանքների արդյունքում բարեկարգվել է մոտ 240 ք.մ. բակի տարածք և վերանորոգվել շուրջ 90 ք.մ. ուսումնական տարածք: Նաև, կրթական միջավայրի բարեփոխումների շրջանակներում, ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում իրականացվել է լսարանային և լաբորատոր գույքի և տեխնիկա-սարքավորումների համալրում՝ հիմնականում նվիրատվությամբ:

Զ. Օտարերկրյա ուսանողներ

2023-2024 ուսումնական տարում ՀԳՊԱ-ում ուսումնառել է 64 օտարերկրյա ուսանող, ինչը կազմում է ուսանողների 7%, որից 5-ը՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունից, 4-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից, 2-ը՝ Լիբանանից, 13-ը՝ Վրաստանից, 36-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝

Ղազախստանից և 3-ը՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից:

2024-2025 ուսումնական տարում ՀԳՊԱ-ում ուսումնառում է 54 օտարերկրյա ուսանող, ինչը կազմում է ուսանողների 5.8%, որից 1-ը Սիրիայի Արաբական Հանրապետությունից, 3-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից, 2-ը՝ Լիբանանից, 10-ը՝ Վրաստանից, 32-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Ուկրաինայից, 5-ը Չինաստանից: Երկու օտարերկրյա ուսանող ուսումնառում է Գյումրու մասնաճյուղում՝ Ռուսաստանի Դաշնությունից:



Պատկերում բերված տոկոսային հարաբերությունները հաշվարկված են օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի համեմատ:

Է. Ուսանողների և դասախոսների շարժունություն

2024 թվականի ընթացքում փոխանակման ծրագրերի շրջանակներում ՀԳՊԱ-ի գործընկեր արտերկրի բուհերում մեկ կիսամյակով ուսումնառության է մեկնել 12 ուսանող.

- 2 ուսանող՝ Հունգարիայի Էգեռ քաղաքի Կարոյ Էստերհազիի անվան

կաթոլիկ համալսարան,

- 4 ուսանող՝ Իսպանիայի Կաստեյո ք.-ի արվեստի և դիզայնի դպրոց,
- 1 ուսանող՝ Իսպանիայի Մալագայի համալսարան,
- 1 ուսանող՝ Կրակովի Յան Մատեյկոյի անվան գեղարվեստի ակադեմիա,
- 2 ուսանող՝ Կլուժ-Նապոկայի արվեստի և դիզայնի համալսարան
- 1 ուսանող՝ Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց,
- 1 ուսանող՝ Սանկտ–Պետերբուրգի Շտիգլիցի անվան գեղարվեստա-արդյունաբերական պետական ակադեմիա:

Նույն ժամանակահատվածում ՀԳՊԱ-ում կարճաժամկետ ծրագրով ուսանել է 2 ուսանող Մասարիկի համալսարանից (Չեխիա):

Դասախոսական կազմի շարժունության սահմաններում 2024 թվականին ՀԳՊԱ է այցելել 1 դասախոս Իսպանիայի Կաստեյո քաղաքի արվեստի և դիզայնի դպրոցից, որն անցկացրեց աշխատաժողով կիրառական արվեստի ուսանողների համար:

ՀԳՊԱ-ի 2 դասախոսներ և 1 վարչական աշխատակից նույնպես հյուրընկալվել են գործընկեր բուհերում.

- 1 դասախոս՝ Մալագայի համալսարան (Իսպանիա),
- 1 դասախոս՝ Կաստեյո քաղաքի արվեստի և դիզայնի դպրոց (Իսպանիա),
- 1 վարչական աշխատակից՝ Գրանադայի համալսարան (Իսպանիա):

Փոխանակման ծրագրերից զատ տեղի են ունեցել նաև ՀԳՊԱ ուսանողների կարճաժամկետ ուսումնական այցեր Շվեյցարիայի Բազել քաղաքի կիրառական գիտությունների և արվեստի համալսարան և Իտալիայի Անկոնա քաղաքի գեղարվեստի և դիզայնի ակադեմիա: Բազել քաղաքում ՀԳՊԱ-ի պատվիրակությունը՝ 9 ուսանող և 1 դասախոս› մասնակցեցին համատեղ

աշխատաժողովի նշված համալսարանի ուսանողների հետ և հնարավորություն ստացան ալցելել Գրաֆիկական միջազգային հավաքին (Alliance Graphique Internationale): Անկոնա քաղաք մեկնած 2 ուսանողները մասնակցեցին ինտենսիվ կարճաժամկետ դասընթացների:

Ադամյան Հովսեփյան կուրատորական պրակտիկայի և ՀԳՊԱ-ի համատեղ կացության ծրագրի շրջանակներում արվեստաբանության մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողուհի Նանե Դավթյանը երեք շաբաթ անցկացրել է Նյու Յորքում, ԱՄՆ: 2025 թվականի փետրվարից նա շարունակելու է կացության ծրագիրը ՀԳՊԱ-ում:

2024թ. ընթացքում համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել մի շարք հաստատությունների հետ.

- Ֆրանսիայի մշակութային ժառանգության պահպանման ազգային ինստիտուտ,
- Անկոնայի արվեստի և դիզայնի ինստիտուտ (Իտալիա),
- Թավրիզի իսլամական արվեստի համալսարան (Իրանի Իսլամական Հանրապետություն),
- Նորարար փորձառական արվեստի կենտրոն,
- Ադամյան Հովսեփյան կուրատորական պրակտիկա,
- Ռուսական արվեստի թանգարան,
- ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի» անվան ռազմական ակադեմիա,
- «Էպիգրաֆ» գրախանութների ցանց:
- «Բրենդոն» մարկետինգային և բրենդինգային գործակալություն,
- «Գրանդ Մաստեր» ՍՊԸ,
- «Մետր Մարկ» ՍՊԸ:

Ուսանողների և աշխատակիցների ԷՐԱՍՄՈՒՍ ՊԼՅՈՒՍ ծրագրի շրջանակներում միջազգային շարժունությունը ապահովելու նպատակով թարմացվել են պայմանագրերը հետևյալ ուսումնական հաստատությունների հետ.

- Գեղարվեստի հունգարական համալսարան, Բուդապեշտ, Հունգարիա
- Մալագայի համալսարան, Իսպանիա
- Գրանադայի համալսարան, Իսպանիա
- Կաստելոյի արվեստի և դիզայնի բարձրագույն դպրոց, Իսպանիա
- Պերուջիա քաղաքի օտարերկրացիների համալսարան, Իտալիա
- Կլուժ-Նապոկայի արվեստի և դիզայնի համալսարան, Ռումինիա
- Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարան, Հունգարիա

Հաշվետու տարվա դեկտեմբերի դրությամբ գործում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը վերաբերող 44 պայմանագիր արվեստի օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և Հայաստանի կրթական և մշակութային հաստատությունների հետ:

Բանակցությունների արդյունքում նոր համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել Կոնկորդիա համալսարանի (Կանադա), Բեռլինի արվեստների համալսարանի (Գերմանիա), Ռայնի արվեստների համալսարանի (Ֆրանսիա):

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին հետազոտական և ստեղծագործական գործունեության զարգացման ու միջազգայնացման, հասարակության հետ համագործակցության ամրապնդման ուղղություններով ՀԳՊԱ-ի ձեռքբերումները և կատարված գործունեության արդյունքները հետևյալն են.

Ա. Գիտական գործունեություն

2024 թվականի սեպտեմբերից վերսկսեց իր աշխատանքը ՀԳՊԱ-ի հետազոտական կենտրոնը, որը մեկնարկեց աշխատանքը գիտական գործունեության ռազմավարության մշակմամբ:

Հետազոտության ոլորտում հաշվետու տարում ՀԳՊԱ-ի դասախոսները հայաստանյան պարբերականներում և ժողովածուներում հրապարակել են շուրջ 21 գիտական հոդված, որոնցից 16-ը՝ միջազգային գրախոսվող մասնագիտական ժողովածուներում, այդ թվում՝ 2 հոդված SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ժողովածուներում:

2024 թվականի ընթացքում ՀԳՊԱ դասախոսների կողմից հրատարակվել են մի շարք մենագրություններ.

- ՀԳՊԱ-ի համաֆինանսավորմամբ հրատարակվել է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Սիմոնյանի «Հայկական լեռնաշխարհի հնագույն արվեստը» մենագրությունը,
- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիմոն Հմայակյանի /համահեղինակ/ «Հայոց պատմություն» հ.1, գիրք 2,
- արվեստագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Պողոսյանի «Պատկերագրական առանձնահատկությունները Վանի թագավորության կերպարվեստում» մենագրությունը,
- գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Արզումանյանի «Արվեստի փիլիսոփայության պատմություն» մենագրությունը:

Հաշվետու տարին արդյունավետ է եղել հատկապես միջազգային գիտաժողովների մասնակցության առումով: ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոսները մասնակցել են 12 հանրապետական և 37 միջազգային գիտաժողովների, այդ թվում ՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Հունգարիայում, Վրաստանում, Ուկրաինայում, Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանում:

Ներկայումս Ակադեմիայում սովորում է 5 ասպիրանտ՝ այդ թվում 1 ասպիրանտ Չինական Ժողովրդական Հանրապետությունից:

2024թ. ՀԳՊԱ-ի երկու դասախոսներ՝ Վահագն Համբարձումի Ղուկասյանը և Նարեկ Հայկի Փայասլյանը՝ ստացել են դոցենտի գիտական կոչում:

Հրատարակվել է ՀԳՊԱ-ի «Տարեգիրք» արվեստագիտական և հումանիտար հետազոտությունների գրախոսվող պարբերականի 1-ին համարը, որտեղ ընդգրկված են ՀԳՊԱ-ի դասախոսների, ինչպես նաև այլ գիտական հաստատությունների և բուհերի հեղինակների 9 գիտական հոդված, 1 ասպիրանտի հետազոտություն և ՀԳՊԱ 1 դասախոսի ուսումնամեթոդական աշխատանք: Պարբերականի 2024 թվականի 2-րդ համարը լույս կտեսնի 2025թ. սկզբին և կներառի 10 գիտական հոդված, որից 2-ը անգլերեն, 2-ը ռուսերեն և 2 ասպիրանտի հոդված, այդ թվում՝ ՉԺՀ-ից ասպիրանտի հոդվածը:

«Տարեգիրք» պարբերականը հրատարակվում է 2004 թվականից և մշտապես ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի ընդունելի պարբերականների ցանկում:

Հայերեն լեզվով մասնագիտական գրականությամբ ուսանողներին ապահովելու նպատակով ՀԳՊԱ-ն նախաձեռնել է արվեստի պատմություն, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, անատոմիա և մի շարք այլ ուղղություններով ուսումնամեթոդական ձեռնարկների թարգմանության գործընթացը:

Բ. Ստեղծագործական գործունեություն

2024 թվականի հաշվետու տարում կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ ՀԳՊԱ-ում, ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում, Դիլիջանի

ստորաբաժանումում և այլ վայրերում.

1. ՀԳՊԱ դասախոսներ Սարգիս Բաբայանի և Զաքար Դեմիրճյանի «Զուգահեռ աշխարհներ» համատեղ ցուցահանդես:
2. Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների չորս և դասախոսների մեկ հաշվետու ցուցահանդեսներ:
3. Կերպարվեստի ֆակուլտետի «Գրաֆիկա» մասնագիտության ուսանողներ Զարուհի Թովմասյանի և Մարիետա Վարդանյանի «Սինդրոմ» ցուցահանդես:
4. Կերպարվեստի ֆակուլտետի «Գրաֆիկա» մասնագիտության ուսանողներ Աշխեն Սևյանի և Դիանա Յոլյանի «Երկու կտոր» ցուցահանդես:
5. LIVER ընկերության հետ ՀԳՊԱ-ի «Համագործակցային նախագիծ» մոդուլի իրականացման արդյունքներով կազմակերպված «Աշխարհը և մենք» ցուցահանդես:
6. ՀԳՊԱ-ի «Արվեստաբանություն» մասնագիտության ուսանողուհի Նանե Դավթյանի կողմից համադրված Գրիգոր Վարդանյանի ստեղծագործական աշխատանքների «ՏՈՒՆ» ցուցահանդեսը:
7. ՀԳՊԱ-ի և Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջի սաների հետ համատեղ «Մեկնարկ և ընթացք» ցուցահանդես:
8. ՀԳՊԱ-ի դասախոս Զաքար Դեմիրճյանի և ուսանողուհի Անի Իվանյանի «Հապտոդիսֆորիա» նախագծի վերաբերյալ միջոցառում:
9. ՀԳՊԱ-ի դասախոս Սարգիս Բաբայանի «Հանդիպում» անհատական ցուցահանդես:
10. ՀԳՊԱ-ի շրջանավարտ Մերի Կարապետյանի «Ստեղծագործական ճանապարհ» խորագրով շնորհանդես և ցուցադրություն:
11. ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի կողմից կազմակերպված «Ժամանակ և Ընթացք» խորագրով ցուցահանդես 42 արվեստագետների ՝ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների ներգրավմամբ:
12. ՀԳՊԱ-ի Կերպարվեստի ֆակուլտետի և Գյումրու մասնաճյուղի ուսանողների ամառային պրակտիկաների արդյունքների ցուցահանդեսներ:
13. ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի դասախոս, նկարիչ Հրաչ Սահակյանի

«Շարժում» խորագրով անհատական ցուցահանդես:

14. ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի «Հայկական հեքիաթ» խորագրով խմբային ցուցահանդեսը:
15. Իմփաքթ Հաբ Գյումրու հետ համագործակցության շրջանակներում կազմակերպված ArtInsight-ի աշխատանքների ցուցադրություն:

Գ. Մրցույթներ և նախագծեր

ՀԳՊԱ-ի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի համաձայն՝ բուհը հատուկ կարևորություն է տալիս նաև դասախոսների, աշխատակիցների և ուսանողների մասնակցությանը հանրապետական և միջազգային մրցույթներին ու զանազան ստեղծագործական նախագծերին: 2024 թվականին ՀԳՊԱ-ի ուսանողների և աշխատակիցների մասնակցությամբ տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Կազմակերպվել է «Կուրատորական սեմինարներ» բանախոսությունների շարք՝ միտված ծանոթացնելու ՀԳՊԱ-ի ուսանողներին և դասախոսներին ասպարեզի ժամանակակից լավագույն փորձին: Բանախոսություններով հանդես եկան Նազարեթ Կարոյանը, Մարինե Մկրտչյանը, Վիգեն Գալստյանը, Նայիրի Խաչադուրեանը և Շողակաթ Ղազարյանը: Նախագիծը շարունակվելու է նաև 2025 թվականին:

2. 2024 թվականի նոյեմբերին մեկնարկեց նոր նախագիծ՝ անիմացիոն ֆիլմերի ցուցադրություններ, որոնց ընթացքում ՀԳՊԱ-ի դասախոս Զաքար Դեմիրճյանը ծանոթացնում է ուսանողներին անիմացիոն ժանրերին և կատարում է վերլուծություն դիտումների ընթացքում: Նախագիծը շարունակվելու է նաև այս ուսումնական տարվա գարնանային կիսամյակում:

3. «Գրանշան 2023-2024» տառատեսակների միջազգային մրցույթում մրցանակներ են ստացել.

- Մերի Ղարիբյանը՝ «Համակարգչային գրաֆիկա» բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհին, արժանացել է 1-ին կարգի մրցանակի «Հայկական տեքստային տառատեսակներ» անվանակարգում:

- Արման Հարությունյանը՝ ՀԳՊԱ շրջանավարտ, արժանացել է 1-ին կարգի մրցանակի «Հայկական ազատ ոճի տառատեսակներ» անվանակարգում և 2-րդ կարգի մրցանակի «Հայկական տեքստային տառատեսակներ» անվանակարգում:
- Սյուզաննա Հակոբյանը՝ ՀԳՊԱ շրջանավարտ, արժանացել է 2-րդ կարգի մրցանակի «Հայկական ազատ ոճի տառատեսակներ» անվանակարգում:
- Համակարգչային գրաֆիկայի և հագ.մոդելավորման ամբիոնի դասախոս Էդիկ Ղաբուզյանի ներկայացրած GHEA Fortune և GHEA Apricot տառատեսակները արժանացել են ոսկե մեդալի:

4. ՀԳՊԱ Հագուստի մոդելավորման կրթական ծրագրի 2024 թվականի շրջանավարտներ Եվա Հովհաննիսյանը ու Սոնա Հովսեփյանն իրենց դիպլոմային աշխատանքներով մասնակցել են Երևանի նորաձևության շաբաթվա շրջանակներում անցկացվող Fashion Scout Armenia մրցույթին և արժանացել մրցանակների:
5. «Ազգային Կենտրոն» զարգացման հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է Դիանա Աբգարի հուշարձանի ստեղծման մրցույթ ակադեմիայի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Հաղթող ճանաչվեց ՀԳՊԱ-ի դասախոս Նարեկ Կնյազյանը:
6. «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է «Հանուն հայի հարատևման» գեղանկարչական, գրաֆիկական աշխատանքների և քանդակի մրցանակաբաշխությունը ՀԳՊԱ-ի Կերպարվեստի ֆակուլտետի «Գեղանկարչություն», «Գրաֆիկա» և «Քանդակագործություն» կրթական ծրագրերի ուսանողների համար:

7. ՀԳՊԱ-ի ուսանողները մասնակցել են Paraton.am-ի կողմից կազմակերպված «Ձեռագործ իրերի փառատոն»-ին, որտեղ հնարավորություն ստացան ներկայացնել և վաճառել իրենց աշխատանքները:
8. Առաջին անգամ կազմակերպվեց «Ամանորյա ուսանողական տոնավաճառ» ցուցահանդես-վաճառքը, որի ընթացքում տեղի ունեցան բարեգործական աշխատարաններ և ինտերակտիվ ներկայացումներ երեխաների համար:
9. Կենտրոնի թաղապետարանի բակերի բարելավման նախագծի շրջանակում համագործակցության արդյունքում ՀԳՊԱ-ի 2 ուսանողների կողմից նկարազարդվեց շուրջ 50 ք.մ. մակերես:
10. 2024 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթի մշակույթ-սպորտ ոլորտում հաղթող են ճանաչվել.
    - Վահե Եղյանը՝ «Քանդակագործություն» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող (2 տեղ),
    - Աստղիկ Սավգուլյանը՝ «Համակարգչային գրաֆիկա» բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող (3-րդ տեղ):
11. «Իտալերենի օրերն աշխարհում» և ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում իրականացվել են համատեղ նախագծեր դեսպանատների հետ:
12. ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի և «Անի» փողային նվագախմբի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում նախագծվել և պատրաստվել են երաժիշտների բեմական նոր համազգեստները:
13. DAAD Armenia գերմանական կազմակերպության «Լույս և ստվեր» նախագծի շրջանակներում ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի Գրաֆիկա բաժնի ուսանողները համագործակցել են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսանողների հետ:
14. Fab Lab Armenia-ի կողմից իրականացվող ՝ նորարական տեքստիլ արտադրության և դիզայնի Fabricacademy Bootcamp 2024 շրջանակներում, արտերկրից ժամանած Bootcamp-ի ավելի քան 25 երկրի ներկայացուցիչներ մասնակցեցին ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի դասախոսների կողմից

անցկացվող՝ ցիանոտիպիայի, լինոփորագրության և բատիկի աշխատարանների:

15. 2024 թվականին ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղը նորից համակարգեց և իրականացրեց Gyumri ARTWEEK երրորդ միջազգային ժամանակակից արվեստի փառատոնը՝ փաստելով, որ հանդիսանում է հետազոտական, գիտական և արվեստային դաշտերի ստեղծման և զարգացման կառույց:

Դ. Կապեր հասարակության հետ

Հասարակության հետ կապերի ակտիվացման և գործունեության թափանցիկության ապահովման նպատակով պարբերաբար թարմացվում է ՀԳՊԱ պաշտոնական կայք-էջը (http://safa.am): 2024 թվականին մեկնարկել է բուհի նոր պաշտոնական կայքի ստեղծման գործընթացը, որի նպատակն է ներառել կայքում ոչ միայն տեղեկատվական բնույթի տվյալներ, այլ նաև ինտեգրել ուսանողների և դասախոսների համար նախատեսված վիրտուալ տիրույթներ:

ՀԳՊԱ-ն շարունակում է զարգացնել իր սոցիալական ցանցերի հարթակները: Այդպես, հաշվետու տարում գրանցվել է հետևորդների աճ Facebook-ի պաշտոնական էջում (432 նոր հետևորդ, 3.5% աճ), Instagram-ի պաշտոնական էջում (715 նոր հետևորդ, 75% աճ), Youtube-ի դիտումների քանակն ավելացել է մոտ 215%-ով: Դեկտեմբերին գործարկվել է նաև բուհի TikTok Studio-ի պաշոնական հարթակը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Այս ոլորտում ՀԳՊԱ-ի նպատակներն են՝ ուսանողներին, առանձնահատուկ կարիքներ ունեցողներին, շրջանավարտներին և հանրությանը անհրաժեշտ ծառայությունների մատուցումը և բուհ-գործատու-շրջանավարտ կապի զարգացումը: 2024 թվականի ընթացքում նշված նպատակների ուղղությամբ ՀԳՊԱ-ի կողմից իրականացվել է.

Ա. Իրազեկվածության բարձրացում և ներառականություն

Ուսանողների, դիմորդների և հասարակության շրջանում ՀԳՊԱ-ի ու դրա գործունեության մասին տեղեկատվության տարածման նպատակով նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ.

1. Տեղեկատվական միջոցառումներ դիմորդների համար

   2024թ. ընթացքում ՀԳՊԱ-ն աշխատանք է տարել մասնագիտական դպրոցների աշակերտների և քոլեջների ուսանողների շրջանում բուհում առաջարկվող կրթական ծրագրերի և առկա հնարավորությունների մասին տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ: ՀԳՊԱ-ի ներկայացուցիչները իրականացրել են այցեր ՀՀ-ում գործող մի շարք հաստատություններ, ինչպես նաև կազմակերպել են շրջայցեր և աշխատարաններ բոլոր հետաքրքրված ապագա դիմորդների համար: Այդպես, 2024թ. աշնանը տեղի են ունեցել 2 շրջայցեր՝ ներկայացնելու բուհում գործող բոլոր մասնագիտությունները, և 3 աշխատարան խեցեգործության և գրաֆիկայի լաբորատորիաներում: Ընդհանուր առմամբ բուհում տեղեկատվական միջոցառումներին մասնակցել են 85 պոտենցիալ դիմորդներ:

   Դիմորդների հետ անմիջական կապը պահպանելու և նրանց հետ աշխատանքը արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծվել է պոտենցիալ դիմորդների էլեկտրոնային բազա:

2. Իրազեկման օրեր առաջին կուրսեցիների համար

Նշված խորագրով պլանավորվել և իրականացվել են հանդիպումներ ՀԳՊԱ 9 կրթական ծրագրերով ընդունված առաջին կուրսեցիների հետ և միջին մասնագիտական հաստատություններից երկրորդ կուրս ընդունված ուսանողների հետ (2024-2025 ուս.տարի): Ներկայացվել են ՀԳՊԱ-ի ծառայությունները, ուսանողական նպաստից օգտվելու, ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերելիս առավելությունների, բացակայությունների, ինչպես նաև հավելյալ (ֆակուլտատիվ) դասընթացների, առաջիկա վերապատրաստումների, ուսանողական ակտիվ գործունեություն ու կամավորություն կատարելու մասին տեղեկություններ: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են նաև խմբային հանդիպումներ նույն ուսանողների հետ՝ բուհում տարբեր գործընթացների մասին տեղեկատվությունը ավելի մանրամասն և թիրախային ներկայացնելու, ինչպես նաև առաջին ամիսների ուսումնառության փորձը քննարկելու նպատակով:

3. Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բաց պաշտպանություններ

2023-2024 ուսումնական տարում ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունները հերթական անգամ անցկացվեցին բաց ձևաչափով՝ հանրայնացնելու ուսումնառության տարիների ընթացքում ձեռք բերված կարողությունները և հմտությունները ամփոփիչ ատեստավորման միջոցով: Նշված միջոցառումներից զատ՝ շրջանավարտների դիպլոմային աշխատանքները հանրայնացնելու նպատակով ստեղծվել է «Ռեկտորի տարեկան հավաքածու» ցուցադրությունը, որը թարմացվելու է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին:

4. Շրջանավարտների դիպլոմների հանձնման պաշտոնական արարողություն

Կայացել է 2023/2024 ուսումնական տարվա ՀԳՊԱ-ի Կերպարվեստի և

Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետների շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը:

5. Ակադեմիական շարժունության մասին տեղեկատվական հանդիպումներ

Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ միտված ներկայացնելու ՀԳՊԱ-ում ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության հնարավորությունները և տեղի ունեցած շարժունությունների արդյունքները.

ա. «Էրազմուսի հաշվետու ժողով», որը 2024 թվականին կազմակերպվել է երեք անգամ: Միջոցառումների ընթացքում ՀԳՊԱ-ի բոլոր հետաքրքրված ուսանողները և աշխատակիցները ծանոթացան 2024 թվականի ընթացքում շարժունության ծրագրերին մասնակցած ուսանողների և դասախոսների հաշվետվություններին, ինչպես նաև շարժունության առկա հնարավորություններին:

բ. Հանդիպում «Ստեղծարար Եվրոպա» հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի հետ, որի ընթացքում ՀԳՊԱ-ի ուսանողները, դասախոսները և վարչական կազմը ծանոթացան ծրագրի հնարավորություններին:

Բ. Ֆինանսական աջակցություն

2024թ. ընթացքում վարձավճարների մասնակի փոխհատուցման համար դիմել է 231 ուսանող, որոնցից 127-ը (54.9%) բավարարվել են, իսկ մնացած ուսանողները մերժվել են անբավարար առաջադիմության կամ համապատասխան հիմքեր չներկայացնելու պատճառով: 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում փոխհատուցման համար դիմած և երկրորդ կիսամյակում ևս այդ իրավունքից օգտված ուսանողների թիվը 138 է: Ընդհանուր առմամբ 2024 թվականին ուսման վարձի փոխհատուցում ստացած ուսանողների թիվը 265 է:

Հաշվետու տարում ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողների՝ տարբեր թիրախային խմբերի պատկանելիության վիճակագրությունը հետևյալն է.



Գ. Աշխատաժողովներ ուսանողների համար

2024 թվականը արդյունավետ էր ուսանողների համար կազմակերպված տարատեսակ սեմինարների, բաց դասերի և կարճաժամկետ դասընթացների տեսանկյունից: Այդպես, ուսանողները մասնակցեցին հետևյալ միջոցառումներին.

- Zbrush,
- Արվեստի կառավարում,
- «Կուրատորական սեմինար» բանախոսությունների շարք,
- «Ներգրավված քաղաքացի» բաց դաս/սեմինար
- «Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը առաջին աշխատավայրում» թեմայով սեմինար,
- «Ինչպե՞ս է աշխատում արվեստի բաժինը խաղ մշակող կազմակերպությունում» թեմայով սեմինար,
- Էրասմուս+ DeSIRe դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված սեմինարներ «Ներառականություն», «Մեդիագրագիտություն», «Ձեռնարկատիրություն» և «Ռեֆլեկտիվ մտածողություն» թեմաներով,

- ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում կազմակերպվել են տարբեր միջոցառումներ և արվեստագետների դասախոսություններ ուսանողների համար, որոնցից էին.
- Ֆրանսիացի արվեստագետ-հետազոտող, տեսաբան և թվային արվեստի արտադրող Ֆլորան Ազիոսմանոֆի դասախոսությունը›
- Խորվաթ-ամերիկյան նկարիչ Գորան Տոմչիչի դասախոսությունը
- Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի դասախոս, ռեժիսոր Գառնիկ Սարգսյանի «Նկարչությունը Փարաջանովի ֆիլմերում» խորագրով դասախոսությունը,
- «Ժառանգություն» art Կոնցեպտ նախագծի հեղինակ Արայիկ Մանուկյանի հետ հանդիպումը,
- Պատմական գիտությունների դոկտոր, Կորնելի Կեկելիձեի անվան վրացական ձեռագրերի ազգային կենտրոնի տնօրեն Զաալ Աբաշիձեի հետ հանդիպում-դասախոսությունը,
- Տառաստեղծ, թարգմանիչ Ռուբեն Թարումյանի հետ հանդիպումը և այլն:

Դ. Լրացուցիչ ծառայություններ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան հիմնական կրթական ծրագրերից զատ իրականացնում է նաև նախապատրաստական դասընթացներ ապագա դիմորդների և բոլոր այն քաղաքացիների համար, որոնք ցանկություն ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում: 2024 թվականի ընթացքում նախապատրաստական դասընթացներում ներգրավված է եղել 115 մասնակից, որից 61-ը՝ 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում, իսկ 54-ը՝ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

Հիմնական կրթական ծրագրից բացի ՀԳՊԱ-ի ուսանողների համար կազմակերպվում են նաև անվճար ֆակուլտատիվ դասընթացներ՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսկ օտարերկրյա ուսանողների համար՝ նաև

հայերեն: Ֆակուլտատիվ դասընթացներում 2024-2025 ուսումնական տարում ներգրավված է 160 ուսանող՝ որից 62% անգլերեն, 16% ֆրանսերեն, 17% իտալերեն, 5% ռուսերեն: Անվճար դասընթացներում ներգրավված ուսանողների վիճակագրական պատկերը հետևյալն է՝

2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.
117	190	234	126	160

Հիմնվեց խոսակցական անգլերենի զարգացմանը միտված "English Club" խմբակը, որի աշխատանքը համակարգել է Birthright Armenia կազմակերպության կամավոր դասախոսը:

Ե. Համագործակցություն գործատուների հետ

Կրթական և մասնագիտական ոլորտում գործընկերային կապերի զարգացման նպատակների իրականացման շրջանակներում համագործակցության նոր հուշագրեր են կնքվել դիզայնի և արվեստի ոլորտներում գործող մի շարք առաջատար մասնագիտական կազմակերպությունների և բարեգործական ընկերությունների հետ, դրանք են.

1. «Բրենդոն» մարկետինգային և բրենդինգային գործակալություն,
2. «Գրանդ Մաստեր» ՍՊԸ,
3. «Մետր Մարկ» ՍՊԸ:

2024-2025թթ. ուսումնական տարում մեկնարկեցին «Համագործակցային նախագիծ» մոդուլի երկրորդ շրջափուլը, ինչպես նաև «Իրական նախագիծ» մոդուլը «Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն» և «Ինտերիերի դիզայն» կրթական ծրագրերի 3-4 կուրսի ուսանողների համար: Այս շրջանակում թարմացվեցին նախկինում ձեռք բերված համագործակցությունները «Արմնոմադս», «Մեսսիվ.», «Ռոքբայթ» և «Բեքբոուն» կազմակերպությունների

հետ, ինչպես նաև մեկնարկեց համագործակցությունը վերոնշյալ գործընկերների հետ: Արդյունքում ուսանողներն աշխատում են նոր գաղափարների և նախագծերի շուրջ, որոնք առաջադրել են գործընկեր կազմակերպությունները: Բացի այդ, ուսանողական խմբերը համագործակցային նախագծեր են իրականացնում նաև ՀԳՊԱ-ի հետ՝ աշխատելով վերջինիս վերաբրենդավորման և հուշանվերների պատրաստման վրա: Բոլոր նախագծերի արդյունքները կամփոփվեն ձմեռային քննաշրջանում:

Զ. Համագործակցություն շրջանավարտների հետ

ՀԳՊԱ-ի ռազմավարական նպատակներից է շրջանավարտների հետ համագործակցության ընդլայնումը և բուհի առօրյա կյանքում նրանց դերի և ներդրումի մեծացումը: 2024 թվականի ընթացքում այս ուղղությամբ կատարվել է բուռն աշխատանք, այդ թվում՝ ուսանողական խորհրդի ուժերով շրջանավարտների թարմ բազայի ստեղծումը և նրանց տվյալների հավաքագրումը:

Մեծ ձեռքբերում էր «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի բարեկամներ» հասարակական կազմակերպության հիմնումը, որը հետապնդում է բուհի շրջանավարտների, ինչպես նաև այլ աջակիցների հետ հաստատուն կապի ստեղծման և համատեղ նախագծերի իրականացման նպատակները:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2023-2027 թվականների ռազմավարական ծրագրի համաձայն՝ առաջնորդության և արդյունավետ կառավարման ոլորտում ՀԳՊԱ-ի նպատակներն են՝ կառավարման համակարգի ճկունության և ռեսուրսների արդյունավետության մեծացումը և որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացումը: 2024 թվականի ընթացքում այս նպատակի ուղղությամբ ՀԳՊԱ-ի կողմից կատարված գործունեության արդյունքներն են.

Ա. Կառավարման համակարգ

2024 թվականի բուհի կառավարման հատկանշական իրադարձություններից էր ՀԳՊԱ-ի ռեկտորի ընտրությունը: Հոգաբարձուների խորհրդի համապատասխան նիստը տեղի ունեցավ մայիսի 6-ին և արդյունքում ՀԳՊԱ-ի ռեկտոր ընտրվեց Վարդան Լևոնի Ազատյանը: Մրցույթի արդյունքները հաստատվեցին ՀՀ Կառավարության 2024 թվականի մայիսի 23-ի թիվ 754-Ա որոշմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում ՀԳՊԱ-ի կառավարման համակարգը բարելավելու նպատակով շարունակվել են բուհի ուսումնական գործընթացների էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները:

Մեծ աշխատանք է տարվել ՀԳՊԱ-ի գրադարանի ռեսուրսների արդիականացման և գրադարանի թվայնացման ուղղությամբ: Այդպես, գրադարանի աշխատակիցները մասնակցել են KOHA էլեկտրոնային գրադարանային համակարգից օգտվելու վերապատրաստումներին և սկսել են թվային կատալոգի ստեղծման աշխատանքները:

Ուսանողների և աշխատակիցների շրջանում բուհում շրջանառվող տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով իրականացվել է էլեկտրոնային հասցեների հավաքագրում և տարատեսակ հայտարարությունների տարածում:

Թվայնացման ուղղությամբ կարևոր նախագծերից է ՀԳՊԱ-ի գեղանկարչական դիպլոմային աշխատանքների ֆոնդի ցուցակագրումը,

վերականգնումը (ռեստավրացիա) և թվայնացումը, ինչպես նաև գծանկարների ցուցակագրումը և թվայնացումը:

2024 թվականին կատարված ներքին ցանցի նախագծման և սպասարկող համապատասխան մասնագետների ներգրավման ուղղությամբ աշխատանքը նախադրյալ է նոր ուսումնական տարում ուսանողների և դասախոսների համար բուհի տարածքներում ինտերնետի ազատ հասանելիության ապահովմանը:

Հաշվետու տարում բուհի գործունեության տարբեր ոլորտների կառավարման արդյունավետությունը բարելավելու նպատակով մեկնարկել են մի շարք գործընթացներ.

- Պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջների հստակեցում և ծանրաբեռնվածության նորմերի վերանայում:
- Դիմորդների հետ աշխատանքի և ընդունելության գործընթացի բարելավում:
- Ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավում:
- Գնահատման ընթացակարգերի արդյունավետության բարձրացում:
- Ռեսուրսների տնօրինման քաղաքականության վերանայում:
- Բուհի վեբ-կայքի և սոցիալական ցանցերում պաշտոնական հարթակների բարելավում:

Վերջին գործընթացի շրջանակներում ձեռք է բերվել է նոր՝ ac.am դոմեյնը, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում բուհի համար՝ սկսած տարբեր կազմակերպությունների և էլեկտրոնային հարթակների կողմից որպես ուսումնական հաստատություն ճանաչվելուց ընդհուպ մինչև անվճար կամ արտոնյալ պայմաններով բուհի ուսանողների և դասախոսների համար ռեսուրսների տրամադրումը:

Նախորդ տարվա ընթացքում իրականացված պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների վերաբերյալ կարիքների վերհանման հարցումների արդյունքում դուրս բերված ուղղություններից մեկի՝ օտար լեզուների տիրապետման մակարդակի բարձրացման ուղղությամբ հավաքագրվել և

մեկնարկել են աշխատանքը անգլերեն լեզվի երկու ուսուցման խմբեր:

2024 թվականին իրականացվել են լայնամասշտաբ գույքագրման աշխատանքներ: Աղբից և Ակադեմիայի կողմից ըստ էության չօգտագործվող գույքից ազատվելու արդյունքում տեղի է ունեցել օգտագործվող տարածքների օպտիմալացում, ինչի արդյունքում Երևանում շենքերի պիտանի տարածքները ընդլայնվել են ավելի քան 230 ք.մ. չափով, իսկ Գյումրու մասնաճյուղում՝ մոտ 95 ք.մ.: Գործընթացը շարունակվելու է նաև 2025թ.:

Մեկնարկել է շրջանավարտների դիպլոմային աշխատանքների ֆոնդերի հաշվառման և ռեստավրացիոն աշխատանքների գործընթացը, կատարվել է համակարգչային տեխնիկայի և սարք սարքավորումների բացակայող գույքային համարների հաշվառումը, ինչպես նաև բնութագրերի լրացում հաշվառման թղթերում:

Բ. Ինտեգրում բարձրագույն կրթության եվրոպական տարածք

ՀՀ կրթության զարգացման և Բոլոնիայի գործընթացի առաջնահերթություններից է ներառական կրթության ապահովումը, որը կարևոր է նաև ՀԳՊԱ-ում կրթական ծրագրեր իրականացնելիս: Այս ուղղությամբ բուհում պարբերաբար անցկացվում են քննարկումներ և հանդիպումներ: Այսպես, 2024թ. նոյեմբերի 5-6-ը ՀԳՊԱ-ում անցկացվեց «Խթանելով ներառականությունն ու արդարությունը» խորագրով վերապատրաստում, որը նախաձեռնել և իրականացրել է ՀՀ-ում Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագիտական խումբը՝ Էրազմուս+ ազգային գրասենյակի աջակցությամբ: Վերապատրաստումն անց էին կացնում Խորվաթիայի կրթության զարգացման ինստիտուտի տնօրեն Նինոսլավ Շմիդտը և փորձագետ Թոմաս Ֆարնելը, որոնք մանրամասն անդրադարձան այսօր Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ներառականության ապահովման օրակարգին և մարտահրավերներին արձագանքելու մոտեցումներին:

Բարձրագույն կրթության արդի պահանջներից է ուսանողների փափուկ հմտությունները զարգացնող մոդուլների և առցանց դասընթացների ինտեգրումը կրթական ծրագրեր: Այդ անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀԳՊԱ-ն մասնակցում է Էրազմուս+ «Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ ճկուն հմտությունների զարգացում»՝ DeSIRe դրամաշնորհային ծրագրի: 2024 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացված գործընթացներն են.

- Մասնակցություն առցանց դասընթացների՝ ա) «Կրթական տվյալների մշակում» թեմայով, որը կազմել է Ֆինլանդիայի Լապեենրանտայի տեխնոլոգիական համալսարանը: բ) «Փափուկ հմտությունների զարգացման մեթոդաբանություն և առցանց բաց դասընթացների մշակում» թեմայով, որը կազմել է Գերմանիայի Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանը:
- Մասնակցություն «Ներառականություն», «Մեդիագրագիտություն», «Ձեռնարկատիրություն» և «Ռեֆլեկտիվ մտածողություն» թեմաներով ուսումնական այցին Իսպանիայի Գրանադա համալսարան:
- Ուսումնական այցի արդյունքների տարածում և տեղական սեմինարների կազմակերպում և անցկացում վերոնշյալ 4 թեմայով ՀԳՊԱ-ի դասախոսների, վարչակազմի (ընդհանուր 58) և ուսանողների (ընդհանուր 45) համար: Սեմինարների ավարտին մասնակիցներին տրվել են վկայագրեր:
- Ծրագրի նպատակների իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների և գրականության ձեռքբերման գործընթացի կազմակերպում (ընդհանուր 19,300 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ ներառյալ համաֆինանսավորումը):

Գ. Որակի ապահովման համակարգ

ՀԳՊԱ-ի որակի կառավարման համակարգը նպաստում է տարբեր ուղղություններով գործունեության արդյունավետության շարունակական բարելավմանը: 2024 թվականին վերանայվել են ՀԳՊԱ որակի ապահովման մի շարք մեխանիզմներ ու գործիքներ, մշակվել են նորերը:

Կարևորելով շահակիցների արձագանքը ՀԳՊԱ գործընթացների վերաբերյալ՝ հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են հետևյալ հարցումները՝

- դասավանդման մեթոդների և դասախոսի լսարանային գործունեության վերաբերյալ,
- աշխատակիցների վերապատրաստման նպատակով կարիքների վերհանում,
- ակադեմիական շարժունության գործընթացի արդյունավետության գնահատում,
- դիմորդների շրջանում տեղեկացվածությանը միտված ՀԳՊԱ միջոցառումների արդյունավետության գնահատում,
- «Համագործակցային նախագիծ» մոդուլի արդյունավետության գնահատում:

ՀԳՊԱ-ի որակի կենտրոնը շարունակաբար դիտարկումներ է իրականացնում և կարծիք ներկայացնում բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի և դրանց պաշտպանության գործընթացի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ 2024 թվականին ՀԳՊԱ շահակիցների շրջանում իրականացվել է 12 հարցում, որոնց մասնակցել է 826 ուսանող և 208 աշխատակից:

ՀԳՊԱ-ն իրականացրել է 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի ընթացիկ գնահատում՝ հաշվի առնելով նաև հավատարմագրման գործընթացի արդյունքներով ՈԱԱԿ փորձագետներին ներկայացրած Բարելավման պլանի գործողությունները: ՀԳՊԱ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչները՝ ՈԱ կենտրոնի կազմակերպմամբ, իրականացրել են

ընթացիկ իրավիճակի վերլուծություն: ՈԱ կենտրոնը ամփոփել և ներկայացրել է վերլուծությունը ՈԱԱԿ հիմնադրամ:

ՀԳՊԱ-ում մեկնարկվել է նաև ԿԾ ներքին աուդիտի գործընթացը: Կազմավորվել են կրթական ծրագրերի արդյունավետությունը վերլուծող և գնահատող խմբեր, ինչպես նաև գործողությունների ժամանակացույցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ա. 2024 թվականի ֆինանսական մուտքերը և ծախսերը

2024 թվականին ՀԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետական բյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից և այլ մուտքերից: ՀԳՊԱ-ի ծախսերը կատարվում են՝ ըստ նախահաշվի, որը կազմվում է՝ հիմք ընդունելով բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում Ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, էտյուդների և այլ միջոցառումների կազմակերպման համար:

2024 թվականին ՀԳՊԱ-ի բյուջեն ձևավորվել է.

ՄՈՒՏՔԵՐ 857,586,692 ՀՀ դրամ

		Երևան	Գյումրու մասնաճյուղ	ՀԳՊԱ Ընդամենը	%
1	Պետական բյուջե	294,527,324	56,093,826	350,621,150	40.9%
2	Ուսանողների վճարներ	307,465,116	25,724,401	333,189,517	38.9%
3	Նախապատրաստական դասընթացներ	31,278,500	3,769,301	35,047,801	4.1%
4	Վարձավճարներ (Ucom, Telecom, IDBank)	4,300,780		4,300,780	0.5%
5	Այլ մուտքեր	29,020,670	4,397,641	33,418,311	3.9%
6	GOVERN ծրագիր	19,847,828		19,847,828	2.3%
7	INCLUSION ծրագիր	532,245		532,245	0.1%
8	ESPAQ Ծրագիր	763,211		763,211	0.1%
9	Desire ծրագիր	6,840,117		6,840,117	0.8%
10	Նախորդ տարվա բյուջեի մնացորդ	51,991,322	21,034,411	73,025,733	8.5%

2024 թվականի ընթացքում կատարված ծախսերը հետևյալն են.

ԾԱԽՍԵՐ 727,515,328 ՀՀ դրամ

		ՀԳՊԱ	Գյումրու մասնաճյուղ	Ընդամենը	%
1	Աշխատավարձ, ներառյալ եկամտային հարկ, դրոշմանիշային վճար և սոց. վճար	514,601,528.80	71,707,940.00	586,309,468.80	81%
2	Պետական հարկեր/վճարներ	13,680,340.00	1,495,063.00	15,175,403.00	2%
3	Գնումներ	27,326,905.01	3,565,955.80	30,892,860.81	4%
4	Ծառայություններ	45,922,449.3	6,700,532.90	52,622,982.20	7%
5	Աշխատանքներ	1,342,440	9,937,461.40	11,279,901.40	2%
6	Գործուղում	98,000.00	583,000.00	681,000.00	0%
7	Կրթաթոշակ	12,236,500.00	2,658,100.00	14,894,600.00	2%
8	Ուսանողական խորհուրդ	701,500.00	-	701,500.00	0%
9	Այլ ծախսեր	8,771,225.35	707,863.00	9,479,088.35	1%
10	Desire Ծրագրով ծախսեր	5,478,523.00	-	5,478,523.00	1%


ՀԳՊԱ 2024թ. ծախսերի կառուցվածքը
0%
0%
0%
2%
2%
1%
7%
4%
2%
82%
1 Աշխատավարձ, ներառյալ եկամտային հարկ, դրոշմանիշային վճար և սոց վճար
2 Պետական հարկեր/վճարներ, այդ թվում՝
3 Գնումներ
4 Ծառայություններ
5 Աշխատանքներ
6 Գործուղում
7 Կրթաթոշակ
8 Ուսանողական խորհուրդ
9 Այլ ծախսեր
10 Desire Ծրագրով ծախսեր

2024 թվականին ուսումնական գործընթացի բարելավմանը միտված ծախսերից անհրաժեշտ է ընդգծել խեցեգործության լաբորատորիայի համար ձեռք բերված ձևավորման հաստոցը՝ 2 697 700 ՀՀ դրամ և ֆյուզինգի վառարանը՝ 4 386 700 ՀՀ դրամ:

Նշենք նաև, որ ՀԳՊԱ-ի ուսանողների և անձնակազմի կենսական և ուսումնական կարիքներին համապատասխան բարելավման աշխատանքները իրականացնելու նպատակով ձեռք է բերվել խոշոր նվիրատվություն անելու վերաբերյալ համաձայնություն Իմեջին Հաբ Բայ Սոֆթ կազմակերպության հետ: Արդյունքում, կազմակերպության կողմից կառուցված տարածքների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 32.000.000 ՀՀ դրամ:

2024 թվականի գործունեության արդյունքում 2025 թվականի համար որպես մնացորդ փոխանցվող ընդհանուր գումարը կազմում է 130 071 400 ՀՀ դրամ:

Բ. Միջազգային ծրագրերից և նախագծերից ներդրումներ

2024 թվականին իրականացված կրթական և գույքային կարևոր ձեռբերումներից է Գյումրու մասնաճյուղում ՖԱԲԼԱԲ թվային լաբորատորիայի հիմնումը՝ Մասաչուսեթսի Տեխնոլոգիական Համալսարանի ՖԱԲՐԻԿ ԱԿԱԴԵՄԻԱ և ՖԱԲԱԿԱԴԵՄԻԱ կրթական բաղադրիչների ներդրմամբ: ՖԱԲԼԱԲ Գյումրի թվային լաբորատորիայի նախագծի իրականացման արդյունքում այս պահին իրականացվում են 3 խոշոր դրամաշնորհներ՝

- ՖԱԲԼԱԲԻ գործիքակազմի ձեռքբերում ՝ 44.520.000 ՀՀ դրամ,
- ՖԱԲԼԱԲ Գյումրի տարածքների արդիականացում՝ 25 000 000 ՀՀ դրամ,
- Reconomy / Թեթև արդյունաբերության հզորացում թվային արտադրության միջոցով ծրագիր՝ 15.000,000 ՀՀ դրամ, որի արդյունքում ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղին տրամադրվելու է ՖԱԲԼԱԲ թվային լաբորատորիայի համար զարգացման բիզնես-մարկետինգային և իրավաբանական

խորհրդատվությունների փաթեթներ:

ՖԱԲՐԻԿ ԱԿԱԴԵՄԻԱ և ՖԱԲԱԿԱԴԵՄԻԱ կրթական բաղադրիչների լիցենզավորման նպատակով նախատեսվում է 12,000 ԱՄՆ դոլար կրթաթոշակի աջակցություն թվով երկու դասախոսների համար:

Հաշվետու տարում մեկնարկել է նաև ԵՄ ԷՐԱՍՄՈՒՍ+ նոր «DeSIRe» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակում ՀԳՊԱ-ի ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 24 142 եվրո: 2024 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 17 109 եվրո, որից 8 929 եվրո գումարը՝ պլանավորվող մեդիալաբորատորիայի տեխնիկայի ձեռքբերման համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2024 թվականը եղել է բավական արդյունավետ բուհի ընդհանուր աշխատանքի կարգավորման և զարգացման նախադրյալների ստեղծման ուղղությամբ, մասնավորապես կրթական միջավայրի զարգացման, նոր համագործակցությունների ձեռքբերման, հետազոտական ու ստեղծագործական գործունեության իրականացման և բազմաբնույթ նախագծերի իրականացման տեսանկյունից:

ՀԳՊԱ-ն կատարել է մեծ աշխատանք գույքային պայմանների զարգացման և ֆինանսների տնօրինման օպտիմալացման ուղղությամբ: Ակտիվ աշխատանք է կատարվել նաև կրթական ծրագրերի որակի ապահովման և զարգացման ուղղությամբ՝ 2024 թվականին կենտրոնանալով գործատուների հետ համագործակցության ամրապնդմանը և նոր կադրերի ներգրավմանը դասախոսական կազմում: Հաշվետու տարում թվայնացման քաղաքականության իրականացման շրջանակներում կատարվել է աշխատանք դիմորդներին, ուսանողներին և աշխատակիցներին տեղեկատվության հասանելիության և գործընթացների թափանցիկության ապահովման ուղղությամբ:

ՀԳՊԱ-ն հետամուտ է լինելու իր ռազմավարական ծրագրի իրականացմանը, ինչպես նաև 2024 թվականին մեկնարկած գործընթացներին, և 2025 թվականի զարգացման թիրախն են լինելու հետևյալ ուղղությունները.

- կրթական ծրագրերի բարելավում, միջազգային և պետական պահանջներին համապատասխանության ապահովում,
- ուսումնական միջավայրի բարելավում՝ շենքային և գույքային պայմանների զարգացում,
- մարդկային ռեսուրսների և ֆինանսների կառավարման քաղաքականության բարելավում,
- ուսանողներին առաջարկվող ծառայությունների զարգացում,
- դիմորդների և շրջանավարտների հետ կապերի ամրապնդում
- բուհի տեսանելիության բարձրացում:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ 2024 թվականին ՀԳՊԱ-ն մեծ աշխատանք է կատարել իր պոտենցիալը գնահատելու և ռազմավարական տարբեր ուղղություններով գործունեությունը զարգացնելու ուղղությամբ: